ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 87-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 17-ի «Թումանյան համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2 -Ն որոշումը և Թումանյան համայնքի ղեկավարի 2021թ. մայիսի 5-ի «Թումանյան համայնքի 2021թվականի բյուջեի եռամսյակային համամասնություններում փոփոխություն կատարելու մասին» թիվ 42 -Ա որոշումը՝
Որոշում եմ.

1.Թումանյանի համայնքապետարանի բյուջեի «Հատուկ նպատակային այլ նյութեր » /հոդված 4269/ հատկացնել 30000 (երեսուն հազար) դրամ՝ՀՀ Անկախության 30-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների կազմակերպման և հյուրասիրության համար՝համաձայն 31.08.2021թ.N 45 պայմանագրի:
2.Հանձնարարել Թումանյան համայնքի դպրոցների և ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների տնօրեններին՝ մինչև ս/թ սեպտեմբերի 17-ը,ըստ համայնքապետարանի կողմից կազմված միջոցառումների ծրագրի.
1)Դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտներին(ըստ ցանկության) հանձնարարել գրել՝«Դարերի Երկիր Հայաստանս» թեմայով շարադրություն,
2)ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների 5-6 տարեկան երեխաներին հանձնարարել նկարել՝ «Իմ Հայրենիքը» թեմայով նկարներ:
3.Թումանյան համայնքի դպրոցների աշակերտների և ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների երեխաների աշխատանքները գնահատելու և հաղթողներին նվեր մրցանակներ տրամադրելու համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1/Հանձնաժողովի նախագահ՝ Վահե Մելքումյան -Թումանյան համայնքի ղեկ. տեղակալ,
2/ -----//------ անդամ՝ Նանե Էվոյան -2-րդ կարգի մասնագետ,
3/ -----//------ անդամ՝ Անահիտ Ռամազյան -Թումանյանի միջն. դպրոցի տնօրեն,
4/ -----//------ անդամ՝ Արմինե Բալայան -Մարցի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի,
5/ -----//------ անդամ՝ Սիրուշ Դավթյան -համայնքի բնակիչ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 24
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 88-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 67–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 24.09.2021թ. թիվ 02/11./32847-2021 գրությունը՝
Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի ղեկավարի 2016 թվականի հունիսի 17-ի «Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին » N 67–Ա որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
1) Հավելվածի 28-րդ կետի 9-րդ ենթակետից հետո լրացնել նոր 9.1 և 9.2 ենթակետեր հետևյալ բովանդակությամբ՝
«9.1)ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը հանրային պաշտոն զբաղեցնող,հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող,քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի ներկայանալիս.
9.2)ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը.»
2) Հավելվածի 33-րդ կետից հետո լրացնել նոր 33.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝
«33.1. Աշխատակազմում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող,քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք պարտավոր են՝աշխատանքի ներկայանալիս 28-րդ կետի 9.1 ենթակետի հիման վրա որոշված անձին ներկայացնելու բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ,

այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը» :

3) Հավելվածի 43-րդ կետից հետո լրացնել նոր 43.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«43.1.Մինչև 33.1-րդ կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում» :

«4) Հավելվածի 50-րդ կետից հետո լրացնել նոր 50.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«50.1. Սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտման հիմքով անցկացվող ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին բացատրությունը (զեկուցագիր և այլն) ներկայացվում է հատուկ՝մեկօրյա (աշխատանքային) ժամկետում, բացատրությունը (զեկուցագրիը և այլն) ներկայացվում է գրավոր» :

5) Հավելվածի 52-րդ կետից հետ լրացնել նոր 52.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«52.1)համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլտված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին» :

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման մասին տեղեկացնել աշխատակազմի հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 24
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 89-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 34-րդ,42-րդ, 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ.N 912-Ն որոշման 34-րդ,35-րդ կետերով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 09.08.2021թ <<Թումանյան քաղաքի 5-րդ փողոցի թիվ 9 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքի սեփականություն համարելու,օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին>> թիվ 72-Ա որոշումը,անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N16082021-06-0049 վկայականը և հաշվի առնելով,որ քաղաքացի Արփեն Արշալույսի Խաչատրյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության գրավոր /մուտք՝ 01.09.2021թ. թիվ 398/ առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝ Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաք,5-րդ փողոց, թիվ 9/28 (վկայական՝ N N16082021-06-0049) հասցեում գտնվող 27,0քմ արտաքին մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 21.5քմ/ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0,0027 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած քաղաքացի Արփեն Արշալույսի Խաչատրյանին /ծնված 02.01.1978թ./:

2.Ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը,այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ

քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Նշված կառույցն իրականացրած անձը գնման նախապատվության առաջարկն ընունելուց հետո 30-օրյա ժամկետում պարտավորվում է Թումանյանի համայնքապետարանի բյուջե վճարել 18303.3 (տասնութ հազար երեքհարյուր երեք դրամ երեք լումա) դրամ, որից՝ համայնքապետարանի 900265123274 հաշվեհամարին՝ 3831,3(երեք հազար ութ հարյուր երեսուն մեկ դրամ երեք լումա) դրամ, որպես հողամասի օտարման գին, իսկ 900265123407 հաշվեհամարին՝ 10640.7 (տասը հազար վեց հարյուր քառասուն դրամ յոթ լումա) ՀՀ դրամ՝ կառույցի օտարման գին /Տարածագնահատման գոտիականության 16-րդ գոտի/:
Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները՝ ընդհանուր 18303.3 (տասնութ հազար երեքհարյուր երեք դրամ երեք լումա) դրամ 30 օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ: Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման IV բաժնի 37-րդ կետով սահմանած կարգով:
5.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի <<Համայնքային սեփականություն ճանաչված,օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին>>N 80-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 25
ք.Թումանյան